



ՍՊԱՍԱՎՈՐԵԼ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է՝ ՏԵՄՆԵԼ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ԱՅՆՊԻՍԻՆ, ԻՆՉՊԻՍԻՆ ՏԵՄՆՈՒՄ Է ՓՐԿԻՉԸ

Իր ժամանակի մեծ մաքր Հիսուսն անցկացնում էր նրանց հետ, ովքեր ակնհայտորեն տարբերվում էին մյուսներից. Նա տեսնում էր նրանց աստվածային ներուժը:

Փրկիչի նման սպասավորելու ջանքեր գրածադրելիս, մեզ կարող են խնդրել սպասավորել մեկին, ով տարբերվում է մեզանից: Դա սովորելու և աճելու հնարավորություն կտա մեզ:

Մշակութային, կրթական, ռասայական, տնտեսական, տարիքային, նախկին կամ ներկայիս վարքագիծը կամ այլ տարբերությունները կարող են հեշտացնել դատել մարդուն՝ նույնիսկ նախքան նրան ճանաչելը: Կանխակալ կարծիք կազմելն ընկած է նախատրամադրվածության հիմքում, որի մասին նախազգուշացրել է Փրկիչը (տես Ա Թագավորաց 16.7, Հովհաննես 7.24):

Կարո՞ղ ենք մենք նայել տարբերություններից այն կողմ և տեսնել ուրիշներին այնպիսին, ինչպիսին տեսնում է Փրկիչը: Ինչպե՞ս կարող ենք սովորել սիրել ուրիշներին այնպիսին, ինչպիսին նրանք կան և ինչպիսին կարող են դառնալ:

Մտիկ տալ և սիրել

Աստվածաշնչում կա նման մի պատմություն հարուստ երիտասարդի մասին, ով հարցրեց, թե ինչպես հավերժական կյանք ունենալ. «Յիսուսն էլ նորան մտիկ տուաւ՝ նորան սիրեց, եւ ասեց նորան. Մէկ բան պակաս է քեզ, գնա, ինչ որ ունիս ծախիր

եւ աղքատներին տուր. Եւ գանձ կ'ունենաս երկնքումը. Եւ խաչն առած՝ եկ ինձ հետեւիր» (Մարկոս 10.21):

Երբ Յոթանասունից Երեց Ս. Մարկ Փալմերը տարիներ առաջ ուսումնասիրում էր այդ պատմությունը, մի նոր հատված գրավեց նրա ուշադրությունը:

«Յիսուսն էլ նորասն լսողի տոսա՛՛ նորասն սիրեց»:

«Մինչ ես լսեցի այդ խոսքերը, ես մտովի հստակ պատկերացրի մեր Տիրոջը, որ մի պահ կանգ առավ և *մտիկ տալալ*՝ այդ պատանուն: *Մտիկ տալալ*՝ այսինքն ուշադիր քննել և թափանցել նրա հոգին, նկատելով նրա դրական կողմերը ու նաև նրա ներուժը, ինչպես նաև գիտակցել նրա ամենամեծ կարիքը:

Այս պահի հասարակ խոսքերը՝ Հիսուսը *նորասն սիրեց*: Նա մեծ սեր և կարեկցանք զգաց այդ լավ երիտասարդի հանդեպ, և այդ սիրո *պրոպոզիցիոն* և *հենց* այդ սիրով, Հիսուսը նույնիսկ ավելին խնդրեց նրանից: Ես պատկերացրի, թե ինչ զգացած կլինեի այդ երիտասարդը, պարուրված նման սիրով, մինչ նրան խնդրում էին անել այնքան բարդ մի բան, ինչպիսին իր ողջ ունեցվածքը վաճառելն ու աղքատներին տալն էր: . . .

[Ես հարցրի ինքս ինձ]. «Ես ինչպե՞ս կարող եմ լցվել Քրիստոսանման սիրով, որ [ուրիշները] կարողանան զգալ Աստծո սերն իմ միջոցով և ցանկանան փոխվել»: Ես ինչպե՞ս կարող եմ *մտիկ տալալ* [ինձ շրջապատողներին] այն նույն ձևով, ինչպես Տերը մտիկ տվավ հարուստ երիտասարդին, տեսնելով նրանց այնպիսին, ինչպիսին կան իրականում և ինչպիսին կարող են դառնալ, այլ ոչ թե լոկ տեսնել այն, ինչ նրանք անում են կամ չեն անում: Ինչպե՞ս կարող եմ ավելի նմանվել Փրկչին»:¹

Սովորել տեսնել ուրիշներին

Երբ սովորում ենք տեսնել ուրիշներին այնպիսին, ինչպիսին տեսնում է Փրկիչը, առատ օրհնություններ են հորդում: Միայն որոշ խորհուրդներ, որոնք կարող են օգնել հասնել այդ նպատակին:

• **Ճանաչեք նրանց**

Ջանքեր գործադրեք մարդկանց ճանաչելու համար՝ անկախ արտաքին մանրամասներից: Հասկացեք, որ հարաբերություններ հաստատելը ժամանակ և ջանքեր է պահանջում: (Օգնության համար տես 2018 Սպասավորման սկզբունքները հոդվածը, «Հաստատել իմաստալից հարաբերություններ»):

• **Քննեք ինքներդ ձեզ**

Ուշադրություն դարձրեք դատողություններին, որոնք դուք կարող եք գիտակցաբար կամ ենթագիտակցորեն կատարել: Գրառումներ կատարեք

ուրիշների վերաբերյալ ձեր ենթադրությունների մասին և փորձեք հասկանալ, թե ինչու նման զգացողություններ ունեք նրանց նկատմամբ:

• **Խուսափեք դատելուց**

Հասկացեք, որ իրավիճակները չեն որոշում անհատի արժեքը: Ձեզ դրեք նրանց տեղը և խորհեք, թե ինչ վերաբերմունք կակնկալեիք ուրիշներից նման իրավիճակներում: Մարդու ընտրությունները և վարքագիծը նրա իրական արժեքից և աստվածային ներուժից զատելը կարող է օգնել մեզ տեսնել նրանց այնպիսին, ինչպիսին տեսնում է Փրկիչը:

• **Աղոթեք նրանց սիրելու համար**

Կանոնավոր աղոթեք նրանց համար անուն առ անուն և համբերությամբ հասեք անկեղծ ընկերության: Աղոթքով պատրաստվեք ձեր ծառայությանը: Արդյո՞ք ձեր արածների և նրանց իրական կարիքների միջև անհամաձայնություն կա:

Հիսուսն Իր ժամանակն անցկացնում էր տարբեր մարդկանց հետ՝ հարուստներ, աղքատներ, իշխանավորներ և հասարակ մարդիկ: Նա հաճախ դառնում էր ուրիշների սխալ դատողությունների զոհը, երբ մարդիկ նայում էին Նրան և Նրա աղքատ ու անշուք արտաքինին : «Եւ մենք տեսանք նորան, եւ մի տեսք չկար, որ նորան ախորժէինք: . . . Անարգուած էր, եւ մենք նորան ոչինչ էինք համարում» (Եսայիա 53.2-3):

ԳՈՐԾԵԼՈՒ ՇՐՎԵՐ
Կա՞ն մարդիկ, որոնց դուք պետք է այլ կերպ նայեք: Ի՞նչ կանեք, որպեսզի այլ կերպ նայեք նրանց:

Քրիստոսանման տեսլական

Մի քույր կիսվեց այս պատմությամբ, թե ինչպես է սովորել նայել հարևանին Քրիստոսանման աչքերով.

«Ջուլիան (անունը փոխված է) ապրում էր իմ կողքին, և թվում էր, ոչ մի ընկեր չունեք: Նա միշտ տխուր ու բարկացած տեսք ուներ: Անկախ դրանից, ես որոշեցի ընկերանալ նրա հետ: Ոչ թե ուղղակի ընկեր, այլ իսկական ընկեր դառնալ նրա համար: Ամեն անգամ հանդիպելիս ես խոսում էի նրա հետ և հետաքրքրվում նրա գործերով: Աստիճանաբար մենք ընկերացանք, ինչի համար ես սրտանց ուրախ էի:

Մի օր ես որոշեցի այցելել Ջուլիային և հարցնել եկեղեցի չհաճախելու նրա որոշման մասին:

Ես իմացա, որ նա մոտակայքում չունի ընտանիքի ոչ մի անդամ կամ բարեկամ: Նրա միակ

եղբայրը, ով ապրում էր շատ հեռվում, հեռախոսով կապվում էր նրա հետ ընդամենը տարին մեկ անգամ: Մինչ ես լսում էի, թե ինչպես էր նա դուրս թափում իր սրտի դառնությունը, զայրույթը և դժգոհություններն իր ընտանիքի և Եկեղեցու վերաբերյալ, այս քրոջ հանդեպ կարեկցանքի և սիրո մի անհերքելի ուժեղ զգացում պատեց ինձ: Ես զգացի նրա ցավն ու դժգոհությունները: Ես հասկացա, թե որքան միայնակ էր նա իր կյանքում: Կարծես ես մի մեղմ շշուկ լսեցի իմ թիկունքից. «Ես նույնպես նրան սիրում եմ: Միրիր և հարգիր նրան»:

Ես նստեցի ու լսեցի, մինչև նա ավարտեց իր ողջ ասելիքը: Ես սեր և կարեկցանք զգացի նրա հանդեպ: Ահա մի քույր, ով երբեք չի զգացել, թե ինչ է նշանակում լինել սիրված: Հանկարծ ես սկսեցի ավելի խորը հասկանալ նրան: Ես

շնորհակալություն հայտնեցի, որ նա թույլ տվեց այցելել իրեն, և հեռացա նրան գրկելուց և նրա հանդեպ իմ սերն ու հարգանքն արտահայտելուց հետո: Նա երբեք չի իմանա, թե որքան զգացված էի ես այդ այցելությունից: Երկնային Հայրը բացեց իմ աչքերը և ուսուցանեց ինձ, որ ես ունակ էի սիրել ավելի մեծ կարեկցանքով: Ես վճռականորեն որոշել եմ ոչ միայն ընկեր լինել նրա համար, այլև ընտանիքի անդամ»:

Ինչ-որ մեկի կյանք հրավիրվելը սուրբ բան է: Աղոթքով, համբերությամբ և Հոգու օգնությամբ մենք կարող ենք սովորել անել դա ավելի Քրիստոսաման տեսլականով:

ՀՂՈՒՄ.

1. Ս. Մարկ Փայմեր, «Յիսուսն էլ նորան մտիկ տուաւ՝ նորան սիրեց», *Լիսինուս*, մայիս 2017, 115: